ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------ի 2025 թվականի №---Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №516-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի №344-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №516-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ ԷՄՇ կանոններ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) ԷՄՇ կանոնների 45-րդ կետի 2-րդ ենթակետում «ԷՀՑ կանոններով սահմանված պահանջներին» բառերից հետո լրացնել «, բացառությամբ ԷԲՑ կանոնների 238-րդ կետով նախատեսված դեպքի» բառերը,

2) ԷՄՇ կանոնների 54.3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում «վերջինիս» բառից հետո լրացնել «կնքած գործարքների նկատմամբ» բառերը, իսկ «բացասական

անհաշվեկշռույթները» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն ենթակետի «դ» պարբերության խախտմամբ կնքված գործարքի,» բառերը,

3) ԷՄՇ կանոնների 54.3-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում «վերջինիս» բառը փոխարինել «վերջինս» բառով և «տրված չափաքանակով» բառերից հետո լրացնել «, իսկ փաստացի ավելի քիչ արտադրելու դեպքում, այդ քանակի համար» բառերը,

4) ԷՄՇ կանոնների 54.3-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» և «դ» պարբերություններով.

«գ. կարգավարական կարգադրությամբ սահմանված ժամանակահատվածի համար ԿԷԱ կայանը մասնակցում է ՕԱՇ-ին, եթե տրված կարգավարական կարգադրության կիրառման արդյունքում վերջինիս տնօրինելի մնացորդային հզորությունը թույլ է տալիս ներկայացնել ՕԱՇ հայտ,

դ. մինչև կարգավարման գործընթացում ներառվելը ներկայացված ՕԱՇ հայտը ԿԷԱ կայանը համապատասխանեցնում (փոփոխում կամ չեղարկում) է տրված կարգավարական կարգադրությանը, եթե այն տրվել է ՕԱՇ փակումից առնվազն 30 րոպե առաջ:»,

5) ԷՄՇ կանոնների 65.1-ին կետի 2-րդ ենթակետում «ցանկը,» բառից հետո լրացնել «դրվածքային հզորությամբ հաշվառվող ենթասպառողների դեպքում՝ սպառման կետի օրական բեռնվածքի գրաֆիկը՝ ժամային կտրվածքով, իսկ ենթասպառողների կազմի հետագա փոփոխության դեպքում՝ դրանց մասին անմիջապես տեղեկացումը,» բառերը,

6) ԷՄՇ կանոնների 240-րդ կետում «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով, իսկ «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «հինգ աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

-- -----ի 2025թ.
ք. Երևան